600.0261.13.09.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2016 թվականի №261Ա
ք.Երևան

«ԱՐՄ-ԱԷՐՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՀԵՐ-ՀԵՐ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 4-ի «Գույք օտարելու թույլտվություն տալու մասին» №835Ա որոշումը և «Արմ-Աէրո» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2016 թվականի սեպտեմբերի 9-ին ներկայացված հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Արմ-Աէրո» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել «Հեր-Հեր» փոքր հիդրոէլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արին համայնքի վարչական տարածքում (Արփա գետի Հեր-Հեր վտակի Հեր-Հեր ջրամբար)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2031 թվականի սեպտեմբերի 13-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «Արմ-Աէրո» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
13 սեպտեմբերի 2016թ.
ժամը 10[30]